

Culture &
Creativity

EU-Eastern Partnership Programme



Մշակութային-կրթական գործընկերության զարգացումը Հայաստանի մարզերում

*Մշակույթի և ստեղծարարության
ուրրտի
Քաղաքականության ամփոփագիր*

№9



Ծրագիրը ֆինանսավորվում է
Եվրոպական միության կողմից:

7/07/2017

Քրիստինե Մանուկյան
Վարուժան Ավանեսյան
Լիկա Մկրտչյան



ՄԵՂՄԱԳԻՐ

Հայկական շատ մշակութային հաստատություններում խրախուսվում է զարգացնել հատուկ կրթական ծրագրեր քաղաքային և գյուղական դպրոցների համար: Այս կրթական ծրագրերը լրացուցիչ օժանդակություն են դպրոցական նյութերին, և դպրոցականներին ավելի արագ և արդյունավետ կընդգրկեն մշակութային կրթության մեջ:

Այնուամենայնիվ, մարզերի դպրոցներին և աշակերտներին հատուկ ուշադրություն չի հատկացվում:

Այս քաղաքականության ամփոփագրի հեղինակները հարցումներ են անցկացրել Կոտայքի մարզի 80 դպրոցներում և հավաքել են տեղեկատվություն 80 դպրոցների տնօրեններից և 500 աշակերտներից: Մասնակիցներն առանձնացրեցին երկու ոլորտ, որոնք պետք է ամրապնդվեն մշակութային կրթության շրջանակներում.

✓ **Հանրակրթական դպրոցական ծրագիր**

Դպրոցական ծրագիրը հաճախ ներառում է հոչակավոր հայերի կենսագործունեության մասին տեղեկատվություն, որը կարելի է ավելի մանրամասն ուսումնասիրել այդ մարդկանց թանգարաններն այցելելով, տեսահոլովակներ և տեսադասընթացներ դիտելով և այլն: Որոշ դպրոցներ դեռևս վարանում են համագործակցել մշակութային հաստատությունների հետ:

✓ **Լրացուցիչ ուսումնական ծրագրեր**

Մշակութային հաստատությունները մասամբ են համագործակցում մարզերի դպրոցների հետ ազգային տոների, ծեսերի,

միջմշակութային միջոցառումների կամ թանգարանային գիշերների արտադասարանային ծրագրերի շրջանակներում:

Հարցումների արդյունքում պարզվել է, որ կա հինգ խոչընդոտ մշակութային կրթական նախաձեռնությունների պատշաճ կազմակերպման համար:

1. Դպրոցների որոշ մասում ֆինանսական միջոցների պակաս նման նախաձեռնությունների իրականացման համար;
2. Դպրոցի ուսուցիչների ոչ բավարար հետաքրքրվածություն և պատրաստակամություն;
3. Պատշաճ առաջխաղացում և մշակութային իրազեկվածություն ապահովելու աշխատանքների պակաս;
4. Սահմանափակ թվով կրթական նյութեր և գործիքներ;
5. Կրթական և մշակութային կազմակերպությունների միջև թույլ համագործակցություն (կամ դրա բացակայություն):

Այս խնդիրները կարող են լուծվել, եթե ստեղծվի Մշակույթի և կրթության զարգացման կենտրոն, որը կգործի որպես շահույթ չհետապնդող կազմակերպություն և կխթանի մարզերի մշակույթը և կրթությունը: Ծրագիրը կարող է մեկնարկել Կոտայքի մարզից:

Առաջարկություններ

1. Հնարավորություն տալ մարզերի դպրոցականներին մասնակցել մշակութային միջոցառումներին
2. Մշակել արվեստի կրթության ծրագրեր մարզերի համար
3. Վերանայել օրենքները և պահանջել մշակութային կրթության աշխատանքներ բոլոր դպրոցներում
4. Աջակցել մշակույթի և կրթության ոլորտների համագործակցությանը տեղական և կենտրոնական իշխանությունների օգնությամբ
5. Ընդգրկել ծնողական խորհուրդներին
6. Ներգրավել մշակույթի և կրթության մասնագետներին:
7. Ստեղծել կայք մշակութային և կրթական իրազեկվածության մասին
8. Իրականացնել դպրոցական ծրագիրը համալրող գործողություններ մշակութային հաստատություններում

ՆԵՐԿԱ ԻՐԱՎԻՃԱԿ

Հայկական շատ մշակութային հաստատություններում խրախուսվում է զարգացնել հատուկ կրթական ծրագրեր քաղաքային և գյուղական դպրոցների համար: Այս կրթական ծրագրերը լրացուցիչ օժանդակություն են դպրոցական նյութերին, և դպրոցականներին ավելի արագ և արդյունավետ կընդգրկեն մշակութային կրթության մեջ:

Իրենց հերթին դպրոցներն օգտվում են մշակութային հաստատությունների հետ համագործակցության հնարավորությունից, և դպրոցականներն այցելում են թանգարաններ, պատկերասրահներ կամ թատրոններ, ինչը նպաստում է դպրոցական ծրագրի ավելի լավ ընկալմանը: Մարզերի դպրոցների ղեկավարների և ուսուցիչների զեկույցների և հարցումների արդյունքները ցույց են տալիս, որ դպրոցական նյութերն ավելի լավ են ընկալվում մշակութային հաստատություններ այցելությունից հետո:

Ներկա պահին դպրոցներում կան արվեստի և՛ ծրագրային, և՛ արտադասարանային դասեր, որոնց ժամաքանակը մեծապես կախված է դպրոցական ծանրաբեռնվածությունից:

Հայկական հիմնական և միջնակարգ դպրոցների դասաժամերի 60%-ը նվիրված է արվեստի կրթությանը, որոնց մեջ մտնում են նկարչության, գրականության և երաժշտության դասեր: Որոշ դպրոցներում կարող է դասավանդվել արվեստի պատմություն, ինչը առաջարկվել է ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից, բայց մնացել է դպրոցի տնօրինության հայեցողությանը:

Միջնակարգ դպրոցի առաջին երկու տարվա ընթացքում այս բաշխումը նվազեցվում է մինչև 8,33 %: Դրա համեմատ 38% մարզերի դպրոցական ծրագրերը նվիրված են օտար լեզուներին, և 27%-ը՝ գիտությանը: Այստեղ շատ քիչ դասաժամ է մնում արվեստի կրթության համար: Հետևաբար, կարևոր է այս դասերը դարձնել հնարավորինս արդյունավետ:

Դպրոցական ծրագրերը միասնական կերպով են մշակվում և բաշխվում են մարզերում: Մարզերում գտնվող դպրոցներին և դպրոցականներին որևէ հատուկ ուշադրություն չի հատկացվում: Մշակութային կրթական ծրագրերը հասանելի չեն մարզի դպրոցների աշակերտներին. պատճառը կրթությանը հատկացված ժամանակն է և դպրոց հասնելու հեռավորությունը:

Այս գործոններն ազդում են աշակերտների ընկալման և ուշադրության մակարդակի վրա:

Շատ մշակութային հաստատություններ ունեն կրթական ծրագրեր, որոնք հասանելի չեն մարզերի դպրոցներում: Պատշաճ տեղեկատվության պակասը, կարճաժամկետ և անկայուն հաղորդակցությունը մարզերի դպրոցների և մշակութային հաստատությունների միջև միայն նպաստում են այս իրավիճակին:

Որոշ մշակութային հաստատություններ չունեն անհատական ծրագրեր մարզային դպրոցների համար՝ դպրոցական այցելություններ, առցանց շրջայցեր, ամառային դպրոցներ, ցուցահանդեսներ, և չեն ցանկանում օժանդակել արվեստի կրթությունը:

Այս քաղաքականության ամփոփագրի հեղինակները հարցումներ են անցկացրել Կոտայքի մարզի 80 դպրոցներում և հավաքել են տեղեկատվություն 80 դպրոցների տնօրեններից և 500 աշակերտներից: Հարցմանը հաջորդեց կլոր սեղանի շուրջ տասը քննարկում մարզային դպրոցների և մշակութային հաստատությունների միջև համագործակցությունը չափորոշելու համար: Պաշտոնական և ոչ պաշտոնական քննարկումների ժամանակ մասնակիցներն առանձնացրեցին երկու ոլորտ, որոնք պետք է ամրապնդվեն մշակութային կրթության շրջանակներում:

Դրանք են՝

✓ **Հանրակրթական դպրոցի ուսումնական ծրագիր**

Դպրոցական ծրագիրը հաճախ ներառում է հոչակավոր հայերի կենսագործունեության մասին տեղեկատվություն, որը կարելի է ավելի մանրամասն ուսումնասիրել այդ մարդկանց թանգարաններն այցելելով, տեսահոլովակներ և տեսադասընթացներ դիտելով և այլն: Որոշ դպրոցներ դեռևս վարանում են համագործակցել մշակութային հաստատությունների հետ (պատճառները կներկայացվեն ստորև):

✓ **Լրացուցիչ ուսումնական ծրագրեր**

Մշակութային հաստատությունները կարող են անհատական համագործակցության կրթական ծրագրեր մշակել հանրակրթական դպրոցների մանկավարժների հետ ազգային տոների, ծեսերի, միջմշակութային միջոցառումների կամ թանգարանային զիջերների, այսինքն՝ արտադպրոցական ծրագրերի շրջանակներում:

Օրինակ՝ ութերորդ դասարանի գրականության դպրոցական ծրագրում կան նշանավոր հայ գրողներ Գ. Սունդուկյանի, Ալ. Շիրվանզադեի, Նար-Դոսի մասին դասեր, ինչը ենթադրում է, որ դպրոցականները կարող են դիտել այս գրողների թատերական ներկայացումները: Մա նշանակում է, որ մեկ այցելությունը թատրոն բավական չէ, քանի որ ներկայացումները տարբեր ժամանակ են բեմադրվում:

Հարցման արդյունքները բացահայտեցին, որ մշակութային կրթական նախաձեռնությունների պատշաճ կազմակերպման համար առկա են որոշ խոչընդոտներ: Որոնք են՝

1. **Որոշ դպրոցներ չունեն ֆինանսական միջոցներ** նմանատիպ նախաձեռնություններ իրականացնելու համար, քանի որ իրենց բյուջեն սահմանափակ է: Ավելին, ծնողները չեն կարող վճարել նման իրավիճակներում երեխաների մասնակցության համար: Օրինակ՝ Սարալանջում մի դպրոց գտնվում է մայրաքաղաքից 35 կիլոմետր հեռավորության վրա: Դպրոցն առաջարկում է տարրական, միջնակարգ և ավագ ուսուցում, բայց շատ քիչ աշակերտ ունի: Միջինում կա յոթ աշակերտ: Յուրաքանչյուր այցելությունը մշակութային հաստատություն կարող է արժենալ առնվազն 5,000 դրամ (€9.60), իսկ եթե դպրոցը համագործակցի մշակութային հաստատության հետ և կազմակերպի առնվազն ամսական չորս այցելություն, ապա յուրաքանչյուր աշակերտի անհրաժեշտ կլինի ամսական 20,000 (€38.50) դրամ: Գյուղական շրջանների շատ ընտանիքների համար սա մեծ գումար է՝ հաշվի առնելով, որ Հայաստանում միջին աշխատավարձը 50,000 դրամ է և կա գործազրկության լուրջ խնդիր:

2. **Դպրոցի ուսուցիչների հետաքրքրության և պատրաստակամության պակաս** համագործակցության ծրագրեր իրականացնելու համար: Հարցումը ցույց տվեց, որ որոշ մշակութային

հաստատությունների և դպրոցների տնօրեններ նման միջոցառումները ավելորդ կամ նյարդայնացնող են համարում: Նրանք լրացուցիչ գումար չեն ստանում մշակութային հիմնարկներ աշակերտների այցելություններ կազմակերպելու և նոր ծրագրեր նախագծելու համար, ինչն էլ իրենց չի ոգևորում: Այն դեպքում, երբ դեռևս առկա ծրագրերը թարմացման կարիք ունեն, որպեսզի հետաքրքիր և գրավիչ դառնան հերթական սերնդի համար: Երևանի Խաչատուր Աբովյանի անվան տուն-թանգարանում մեկնարկել են առցանց այցելություններ, որտեղ վիրտուալ այցելուներին ուղեկցում են թանգարանի դահլիճներով: Ծրագիրն արդեն ընդգրկված է որոշ դպրոցների ուսումնական ծրագրերում: Ցավոք, տեսանյութերին ուղեկցող տեքստեր չկան և տեսանյութերը պատրաստված են առանց աշակերտներին հաշվի առնելու: Դպրոցի ուսուցիչների և թանգարանի անձնակազմի միացյալ ջանքերը կարող են հեշտությամբ բարելավել տեսաայցելությունները: Դպրոցի ուսուցիչները կարող են համագործակցել և տեսահոլովակներ նկարել որոշակի թեմայի մասին՝ համագործակցելով համապատասխան կրթական հաստատությունների մասնագետների հետ:

Սա այն պատճառով է, որ կրթական ծրագրերը մշակվում են քաղաքային դպրոցների հետ, որտեղ կրթության մակարդակն ավելի բարձր է: Չկա տեղափոխության խնդիր և չկա տեսադասընթացների և առցանց շրջայցերի կարիք: Երևանի դպրոցների աշակերտների համար շատ ավելի հեշտ է թանգարաններ, թատրոններ և արվեստի օջախներ այցելելը, քանի որ մարզերում այդ նպատակի համար տրանսպորտի արժեքը և ժամանակը տարբեր են:

3. Առկա է պատշաճ տարածման և մշակութային իրազեկվածություն ապահովելու աշխատանքների պակաս մարզերի համայնքի անդամների, ծնողների, դպրոցների տնօրինության և կենտրոնական իշխանության պաշտոնյաների շրջանում: Ի

տարբերություն քաղաքային բնակչության՝ մարզերի բնակիչները ունեն ավելի մեծ ծանրաբեռնվածություն, որը ներառում է տնային աշխատանք, գյուղատնտեսություն և շատ այլ պարտականություններ և պարտավորություններ: Ընտանիքները հաճախ իրենց երեխաներին էլ են ներառում աշխատանքի մեջ, և մշակութային հաստատության այցելությունը դառնում է ոչ առաջնային: Երեխայի զարգացման գործում ուշադրություն չի դարձվում մշակութային կրթության կարևորությանը: Հիմնականում սա կապված է տեղեկատվության պակասի և նման գործողությունների գնահատման ցածր մակարդակի հետ: Սա տեղի է ունենում դպրոցների, մշակութային կազմակերպությունների, համայնքի և շահառուների կողմից թույլ առաջնադասման և իրազեկման պակասի արդյունքում:

4. Սահմանափակ կրթական նյութեր և գործիքներ, ինչպիսիք են տեսա-ձայնային նյութերը . դասախոսությունները, կարճամետրաժ ֆիլմերը և բուկլետները: Անգամ եթե լինի մեկ այցելություն որևէ մշակութային հաստատություն, դպրոցի ուսուցիչները կարող են նախաձեռնել քննարկումներ բուկլետներում գրված տեղեկատվության մասին կամ կազմակերպել կարճ կինոդիտում դասարանում, թեմայի վերլուծություն և քննարկում:

5. Կրթական և մշակութային կազմակերպությունների, համայնքի, տեղական և կենտրոնական ղեկավարության միջև թույլ համագործակցության մեխանիզմներ (կամ դրանց բացակայություն) զարգացնելու և ձևավորելու մշակույթ-կրթություն համագործակցությունը:

Մշակութային հաստատությունների մշակած ծրագրերը պետք է արտացոլեն մարզային դպրոցների կարիքները և նախագծվեն ամեն տարվա դպրոցի ծրագրին համապատասխան: Օրինակ՝ նշանավոր հայ գրող, բանաստեղծ և հասարակական գործիչ Հովհաննես

Թումանյանի կենսագործունեության մասին տեղեկատվությունը պետք է ներառի երկու բաղադրիչ. առաջինը տարրական դպրոցների, երկրորդը՝ ավագ դպրոցների աշակերտների համար: Թանգարանի տնօրինությունը պետք է մշակի գաղափարապես տարբեր երկու կրթական ծրագիր՝ սերտ համագործակցելով կրթության մասնագետների հետ: Մեկ այլ օրինակ է Հայաստանի ազգային պատկերասրահը Երևանում, որն առաջարկում է կրթական լայն ծրագրեր, որոնք կարող էին կիրառվել մարզերում: Սակայն պատկերասրահը համագործակցում է ամենաառաջադեմ ավագ դպրոցների հետ, ինչպես «Այբ» դպրոցը՝ չներառելով մարզերի դպրոցները: Պատկերասրահն առաջարկում է հունական և հռոմեական դիցաբանության դասեր 7-րդ կամ 8-րդ դասարանների դպրոցականների համար իր «Օլիմպոս լեռան վրա» կրթական ծրագրի շրջանակներում: Սա կարող է մի փոքր բարդ թվալ նույն տարիքային խմբի մարզերի դպրոցականների համար:

Հաշվի առնելով այն փաստը, որ պատշաճ և արդյունավետ մշակութային կրթական ջանքերի կամ նախաձեռնությունների զարգացումը պահանջում է զգալի գիտելիքներ, ջանքեր կամ միջոցներ՝ առաջարկվում է ստեղծել այնպիսի **Մշակութային և կրթական համագործակցություն**¹ ինչպես Միացյալ Թագավորությունում, և իրականացնել նման նախաձեռնություն Հայաստանում: Այս համագործակցությունը կարող է համակարգվել հաջողված **Մշակութային կրթական մարտահրավերից**² հետո նախաձեռնված Անգլիայի արվեստի խորհրդի (ACE)³ կողմից:

¹ CULTURAL EDUCATION IN ENGLAND The Government response to Darren Henley’s Review of Cultural Education. See at:

http://www.mmf.org.uk/sites/default/files/Cultural_Education_Govt_response.pdf

² The Cultural Education Challenge. See at: <http://www.artscouncil.org.uk/children-and-young-people/cultural-education-challenge>

³ <http://www.artspromotional.co.uk/news/ace-support-50-new-cultural-education-partnerships>

ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ՝

Տարբերակ 1. *Հիմնել Մշակույթի և կրթության զարգացման կենտրոն (CCED)*

Տարբերակ 2. *Թողնել ամեն ինչ, ինչպես՝ կա (Ստատուս-քվո)*

Տարբերակ 1 . Հիմնել Մշակույթի և կրթության զարգացման կենտրոն (CCED)

Մշակույթի և կրթության զարգացման կենտրոնը կգործի որպես շահույթ չհետապնդող կազմակերպություն և կխթանի մարզերում մշակութային և կրթական համագործակցությունը: Նախագիծը կարող է մեկնարկել Կոտայքի մարզում:

Կենտրոնը կաշխատի մարզերում համապատասխան կրթական ծրագրերի հետ՝ սերտ համագործակցելով տեղական իշխանությունների և մշակութային հաստատությունների հետ: Այն կընտրի համապատասխան անձնակազմ, կմշակի ծրագրեր, կդիմի ֆինանսավորման համար առաջին հերթին տեղական մարմիններին և կենտրոնական կառավարությանը, դպրոցներին, ներդրողներին և այլն: Կենտրոնի գործունեությունն ուղղված կլինի 6-17 տարեկան դպրոցականներին:

Կենտրոնը կհետևի, որ ավելի շատ երեխաներ ստեղծեն, ստեղծագործեն և բեմադրեն: Յուրաքանչյուր երեխա հնարավորություն կունենա այցելել, փորձել, մասնակցել, ավելին հասկանալ և վերանայել նախկինում արված աշխատանքը:

Կենտրոնը կունենա փորձագետների փոքր խումբ՝ մշակույթի, կրթության, լոգիստիկայի և աշխատանքները համակարգող մասնագետ: Խմբերը կաշխատեն Կոտայքի մարզի յուրաքանչյուր շրջանում (մարզում կա երեք շրջան): Փորձագետները կլինեն մշակույթի և կրթության փորձագետներ, ովքեր կհամակարգեն ծրագրերը, կմշակեն համապատասխան ծրագրեր դպրոցների և մշակութային կազմակերպությունների, տեղական իշխանությունների շահառու կողմերի հետ սերտ համագործակցությամբ՝ հաշվի առնելով կոնկրետ աշակերտների խմբի կարիքները: Նրանք անընդհատ կփնտրեն հետաքրքիր ծրագրեր, համադրություններ, կբարելավեն ձայնային-տեսողական նյութերը և ավելի շատ մարդկանց կընդգրկեն համագործակցության ընդլայնման մեջ: Նրանք նաև կկապվեն համապատասխան նախարարությունների հետ և ջանք կգործադրեն նորարական մտքերի առաջ բերման համար:

Այս նպատակի համար անհրաժեշտ է իրականացնել հետևյալ քայլերը.

- ❖ Սահմանել կենտրոնի առաքելությունը:
- ❖ Այն կարելի է կառուցել դպրոցի, աշակերտների և մշակութային կազմակերպությունների շուրջ:
- ❖ Ստեղծել համապատասխան ռազմավարություններ և կարճաժամկետ նպատակներ:
- ❖ Մշակել Մշակույթի և կրթության զարգացման կենտրոնի կառուցվածքը և անձնակազմը, ձևավորել խմբեր:

Օրինակ, եթե մարզային դպրոցում ցանկանում են Ավետիք Բսահակյանի կյանքի վերաբերյալ տեսահոլովակ նկարել, կարող են համագործակցել Ավ.Բսահակյանի տուն-թանգարանի հետ համատեղ տեսադասընթաց ստեղծելու համար: Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնի խաղացանկում կան Գաբրիել Սունդուկյանի «Պեպո» և Վիլյամ Սարոյանի «Իմ սիրտը լեռներում է» ներկայացումները: Այս երկու ներկայացումը դպրոցական ծրագրի մասն են, և թատրոնը կարող է դրանք

բեմադրել, երբ աշակերտներն անցնում են այդ նյութերը դպրոցում տվյալ ժամանակահատվածում: Մշակույթի և կրթության զարգացման կենտրոնը կարող է կապվել թատրոնների հետ դպրոցի անունից և առաջարկել բեմադրել ներկայացումներ, որոնք դպրոցական ծրագրի մասն են և երաշխավորել որոշակի օրերին հանդիսատեսի ներկայությունը: Համագործակցության գործընթացի ընթացքում անհրաժեշտ է պահպանել համակարգում և վերահսկողություն սկսած կառույցների ձևավորումից մինչև ֆինանսների բաշխումը:

Կստեղծվի հատուկ աուդիտորական հանձնաժողով կազմված շահառուներից, առաջին հերթին ծնողներից, տեղական մարմիններից, կենտրոնական կառավարությունից և այլն:

Յուրաքանչյուր ծրագրի ավարտից հետո Մշակույթի և կրթության զարգացման կենտրոնի աուդիտի հանձնաժողովը կհետազոտի աշակերտների և իրենց ծնողների արձագանքը, թե որքանով են ծրագրերը համապատասխանում դպրոցի, մշակութային հաստատությունների և Մշակույթի և կրթության զարգացման կենտրոնի նպատակներին: Հետազոտության արդյունքներն օգնում են բարելավել և թարմացնել ծրագրերը:

SWOT վերլուծություն

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
<p>1. Դպրոցականների մոտ գեղագիտական աշխարհայացքի ձևավորում</p> <p>2. Բոլոր շահառուների հավասար ներկայություն</p> <p>3. Դպրոցների, մշակութային կազմակերպությունների և կազմակերպիչների դրական իմիջի հաստատում:</p>	<p>4. Համապատասխան ֆինանսավորման բացակայություն</p> <p>5. Մասնագետների և ծրագրի ընկալման պակաս</p> <p>6. Տեղական իշխանությունների կողմից սահմանափակ օժանդակություն</p>
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ՄՊԱՌՆԱԼԻՔՆԵՐ
<p>7. Մարզերում մշակույթի և ստեղծարարության պատկերացումների զարգացումը</p> <p>8. Համայնքի մշակութային իմիջի բարելավում</p> <p>9. Մշակութային կազմակերպության առաջխաղացում և մշակութային առաջարկի ձևավորում, որը կարող է օգտագործվել այլ ձեռնարկություններում</p> <p>10. Միջհամայնքային համագործակցության խրախուսում</p>	<p>11. Իրական կարիքների սխալ գնահատում</p>

Տարբերակ 2: Ստատուս քվո

Եթե համակարգը մնա անփոփոխ, չի լինի մշակութային-կրթական համագործակցության փոփոխություն: Դպրոցները կշարունակեն հետևել պասիվ և նեղ համագործակցության առանց հետագա առաջխաղացման՝ խնայելով ժամանակ և ջանք մեծապես ի վնաս աճող սերնդի, հատկապես մարզերի երեխաների և երիտասարդների:

Որպես այդպիսին, առաջ կգան հետևյալ խնդիրները.

1. Մշակութային-կրթական համագործակցության զարգացման պակաս կամ սահմանափակվածություն:
2. Երեխաների շրջանում մշակույթի և ստեղծարարության նկատմամբ հետաքրքրության բացակայություն:
3. Մշակութային և կրթական կազմակերպությունների զարգացվածության պակաս:
4. Բնակչության, իր մշակույթի և կրթության համար հեղինակության մարտահրավերներ:
5. Ժամանակի կորուստ . երեխաներին և երիտասարդներին տեղեկատվությունը չի տրվում ժամանակին:

Հետևաբար, այլընտրանք է մշակույթ-կրթություն համագործակցության զարգացումը կորպորատիվ մակարդակում պետական և քաղաքային իշխանությունների լուրջ աջակցությամբ:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Համոզվե՛ք, որ մարզերի դպրոցականները հնարավորություններ ունեն մասնակցել մշակութային հաստատությունների կողմից կազմակերպված միջոցառումներին/ ծրագրերին: Պետք է հաշվի առնել, որ տարվա ընթացքում մեկ անգամ այցելությունը բավարար չէ: Մի քանի անգամ այցելությունը կարող է օգտակար լինել դպրոցականներին տարբեր մշակութային հաստատությունների կողմից արվեստի և կրթության ծրագրերում ներառելու համար:
2. Մշակութային հաստատությունները, որոնք մշակում և իրականացնում են արվեստի կրթության ծրագրեր պետք է հաշվի առնեն մարզերի դպրոցների կարիքները:
3. Վերանայե՛լ և վերամշակե՛լ օրենսդրությունը որպեսզի ներառվեն հատուկ և հստակ բաժիններ մշակութային կրթության վերաբերյալ՝ ընդգծելով դպրոցի և մշակութային հաստատության իրավական պահանջը, և առաջ մղելով աշակերտների և երիտասարդների մշակութային զարգացվածությունը: Մշակութային կրթությունը լայն և հավասարակշռված դպրոցական ծրագրի մասն է, իսկ երեխաներին և երիտասարդներին ուսուցման ընթացքում պետք է տրամադրվի տարբեր մշակութային զբաղվածություն (այդ թվում երաժշտական):
4. Կոչ անե՛լ տեղական և կենտրոնական իշխանություններին աջակցել մշակութային կրթական համագործակցությանը և տրամադրել ֆինանսական, լոգիստիկ և քաղաքական աջակցություն:
5. Ներգրավե՛լ համայնքը և հատկապես ծնողական խորհուրդները համագործակցության համակարգման և աուդիտի գործողություններում, որպեսզի ապահովվի որոշումների ընդունման թափանցիկությունը և հավասարակշռվածությունը:

6. Ներառել՝ մշակույթի և կրթության մասնագետների, ինչպես նաև հանրային և մասնավոր հաստատություններ համագործակցության գործողությունների ձևավորման և համակարգման գործընթացում:
7. Բարձրացնել՝ մշակութային իրազեկվածությունը դպրոցներում և մշակութային հաստատություններում: Օրինակ՝ Մշակույթի և կրթության զարգացման կենտրոնը կարող է նախագծել և ստեղծել կայք, իրականացնել պարբերաբար տեղեկատվության թարմացումներ և ներգրավել իր լսարանին սոցիալական ցանցերի միջոցով: Սա հնարավորություն կտա դպրոցներին և հաստատություններին այլ շրջաններում իմանալ այս ծրագրի մասին:
8. Մշակութային հաստատությունները, այդ թվում տուն-թանգարանները պետք է կազմակերպեն այցելություններ, առցանց շրջայցեր, ինտերակտիվ ծրագրեր, ամառային դպրոցներ, ցուցահանդեսներ և մրցույթներ՝ ի լրացում դպրոցական ծրագրի: Սա ներառում է նշանավոր հայ գործիչների տուն-թանգարանները, ինչպիսիք են գրող Ավետիք Իսահակյանի, նկարիչ Մարտիրոս Սարյանի, բանաստեղծ Եղիշե Չարենցի, գրող և հասարակական գործիչ Խաչատուր Աբովյանի, երգահան Արամ Խաչատրյանի և գրող Հովհաննես Թումանյանի, ինչպես նաև Գ. Մունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնը, Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնը, Երևանի Հովհաննես Թումանյանի անվան պետական տիեկիկային թատրոնը, Հայաստանի ազգային պատկերասրահը և նմանատիպ հաստատությունները:

Հավելված 1

Այս աղյուսակը ներկայացնում է մշակութային ենթակառուցվածքների բաշխվածությունը՝ ըստ մարզի և բնակչության թվաքանակի:

Մարզ	Բնակչություն	Թանգարանների քանակը	Միջոցառումներ իրականացնող կենտրոններ	Գրադարանների քանակը
Երևան	1,071,500	68	18	31
Արագածոտն	131,300	2	0	71
Արարատ	260,100	2	1	93
Արմավիր	267,000	3	0	81
Գեղարքունիք	233,000	2	1	86
Լոռի	228,000	8	3	70
Կոտայք	255,000	5	1	62
Շիրակ	246,400	8	2	95
Սյունիք	140,200	4	2	129
Վայոց ձոր	51,400	1	0	44
Տավուշ	126,700	3	0	65
Ընդհանուր	3,010,600	106	28	827

Աղյուսակ. Բնակչության տոկոսը, որը վերջին վեց ամսվա ընթացքում գոնե մեկ անգամ մասնակցել է մշակութային միջոցառման:

	Այցելություն թատրոն, կինոթատրոն				Այցելություն թանգարան, պատկերասրահ
	2011 (N= 2365)	2012 (N= 2384)	2013 (N= 1832)	2015 (N=1863)	2011 (N= 2365)
Այո	17%	19%	17%	22%	11%
Ոչ	83%	81%	83%	78%	89%

Հավելված 2

Հղումներ

1. www.edu.am
2. <http://www.mincult.am>
3. <https://www.culturepartnership.eu/>
4. <https://www.culturepartnership.eu/am/article/arm-facts-sheet>
5. <https://hy.m.wikipedia.org/wiki/Կրթություն>
6. <http://www.myyerevan.am/am/culture/museums>
7. <http://www.imegaservice.com/index.php?act=armenia&op=culture&cid=1&langs=am>
8. <http://www.gallery.am/hy/interactive/>
9. http://www.isahakyanmuseum.am/htmls/educational_programmes.html
10. <http://www.cmf.am/Education>
11. <http://www.artswork.org.uk/programmes/south-east-bridge/cultural-education-partnerships-201518/>
12. <http://www.readingarts.com/reading-arts/cultural-partnership/cultural-education-partnership>
13. <http://www.liverpoollearningpartnership.com/liverpool-cultural-education-partnership/>
14. <http://www.artspromotional.co.uk/news/ace-support-50-new-cultural-education-partnerships>
15. <http://www.artscouncil.org.uk/what-we-do/cyp/cultural-education-challenge-find-out-more/>
16. <http://www.nnfestival.org.uk/develop-your-schools-arts-policy>
17. *Children's Right to Play and the Environment*. International Play Association: Promoting the Child's Right to Play. **Submission to: UN Committee on the Rights of the Child Day of General Discussion, 2016**

Ծանոթություն

Ձեկույցը մշակվել է ԵՄ՝ Արևելյան գործընկերության «Մշակույթ և ստեղծարարություն» ծրագրի աջակցությամբ: Սույն զեկույցի բովանդակությունը չի արտացոլում Եվրոպական միության պաշտոնական կարծիքը: Հրատարակությունում զետեղված տեղեկատվության և տեսակետների համար ողջ պատասխանատվությունը կրում են հեղինակները:

Եվրոպական միության՝ Արևելյան գործընկերության «Մշակույթ և ստեղծարարություն» ծրագրի նպատակն է՝ ապահովել մշակութային ու ստեղծարար ոլորտների աջակցությունը, ինչպես նաև նպաստել նրանց ներդրման մեծացմանը Հայաստանում, Բելառուսում, Ադրբեջանում, Վրաստանում, Մոլդովայում և Ուկրաինայում՝ կայուն մարդասիրական, սոցիալ-տնտեսական զարգացման մեջ: